ՍԱՐԱՊԱՏ

Վարչական ղեկավար՝ Կառլեն Մարտիրոսյան

Հեռ: 077 64 65 89

Մակերես՝ 20.03 կմ²

Բնակչություն՝ 110

Ինդեքս՝ 2805

martirosyankarlen716@gmail.com

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցքից 15-18կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 38 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Սամռլի, Սամորլու, Սամուռլի, Սամուրլի անվանումները: Սարապատ է վերանվանվել 1946թ-ին: Գյուղը տեղադրված է Չիչկան գետի ձախափնյակում՝ ծովի մակարդակից 1970 մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Ունի աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղը զգալի տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից: Գյուղի բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Բասենի շրջանից 1828-

1829թթ: 1873 թ-ին գյուղն ունեցել է 165, 1897 թ-ին՝ 282, 1926 թ-ին՝ 242, 1939 թ-ին՝ 348, 1959 թ-ին՝ 158, 1979 թ-ին՝ 170, 1989 թ-ին՝ 67 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 117 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 30 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է:Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (130հա), խոտհարքերը (17հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 39 և 797 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերայինկուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: